

Նարդուրիւր ստորագրեցին Գերմանիոյ Նախարարապետ՝ Բիւլով, Աւստրիա-Հունգարիոյ դեսպան՝ Սէօգեններ եւ Իտալիոյ դեսպան՝ Լանծա: Աւստրիա-Հունգարիոյ եւ Գերմանիոյ միջև 1879 Հոկտ. 7ին հաստատուած, Բայց 1888 Փետր. 3ին հրատարակուած Նիզակակցութիւնը հետեւեալ պայմանները կը դնէր. 1. Ի դիպուածի որ Ռուսիա երկու պետութիւններէն միոյն վրայ յարձակում ընէ, երկուքն ալ պարտական են իրենց ամբողջական զինուորական զօրութեամբն իրարու օգնելու. Բայց եթէ 2. ուրիշ ոեւէ պետութիւն մը (զ. օր Գաղղիա) իրենցմէ միոյն վրայ յարձակում սկսի՝ յարձակում չկրող դաշնակիցը յարձակման պիտի չմասնակցի, այլ չեզոք դիրք պիտի ըռնէ:

Իտալիա այս Նիզակակցութեան մէջ մտաւ 1887 Հոկտ. 1ին, Բիզմարկի եւ Կրիսպիի միջև եղած Փրիտրիկարուէի դիւանական բանակցութիւններէն ետքը. Այս դաշնակցութեան զօրութեամբ 1. Առաւորիս կը պարտաւորուէր ա) Իտալիոյ եւ Գաղղիոյ մէջ ծագած պատերազմի (յարձակողական կամ պաշտպանողական) ստեն չեզոք մնալու, բ) իտալիոյ՝ Միջերկրականի վրայ ունեցած շահերը դիւանագիտապէս ամբողջ զօրութեամբ պաշտպանելու եւ Բալկանի վրայ ամէն ձեռնարկութիւն Իտալիոյ հետ համաձայնելով ընելու: 2. Իտալիս կը խոստանայ չեզոք մնալ Աւստրիա-Ռուսական պատերազմի ստեն: Գերման-Իտալիական Նիզակակցութեամբ երկու պետութիւնք իր պարտաւորուին 1. յարձակողական պատերազմ չսկսիլ, 2. Ի դիպուածի որ Գաղղիա երկուքէն միոյն վրայ յարձակում ընէ, ամբողջ զօրութեամբ իրարու օգնել, եւ 3. եթէ Գաղղիա եւ Ռուսիա Գերմանիոյ կամ Աւստրիա-Հունգարիոյ վրայ յարձակում սկսի՝ Իտալիա կը պարտաւորուի ամբողջ զինուորական զօրութեամբն երկուքին ալ օգնելու:

Հանդերձ այսու Իտալիոյ տէրութեան երկից դաշնակցութիւններէ զուրս գտնուող Գաղղիոյ դաշինքն ու յենայի արքունեաց հետ ունեցած Բարեկամական յարաբերութիւնները մեծ առհաստաչայ են տիեզերական խաղաղութեան:

Գերմանիս: — Գերման դաշնա-

կցական պետութիւնը Յունիսի 19ին մեծ կորուստ մ'ունեցաւ յանձին Ալբերտի՝ Սաքսոնիոյ Թագաւորին, որ կարճատեւ հիւանդութենէ մ'ետքը՝ փոխեցաւ յաշնանցն իւր 74ին տարւան հասակին մէջ: Հանգուցեալն իրեն անմահ անուն յօրինեց Գերմանիոյ պատմութեան մէջ իբր տաղանդաւոր կառավարիչ ու մեծ զօրավար: 1870—1871ին պատերազմին, բայց յատկապէս Սէն Պրիվայի, Բոմնի եւ Սրտանի ճակատներուն մէջ՝ Բրուսիացւոց ունեցած մեծ յաջողութիւնները՝ մեծաւ մասամբ սաքսոնական ուժածգաց հրամանատար Արքդքս. Ալբերտի ռազմագիտական արուեստին արդիւնքն էին: Ալբերտ անգլաակ ըլլալով՝ Թագ ժառանգեց իւր եղբայրը — Գէորգ Ա. (ծն. 1828):

Անգղիս: Անգլիական պաշտօնաբանին Նախագահը՝ լորտ Սալիզբորի ամառոյս 13ին իւր հրաժարականը տալով, իրեն յաջորդ կը կարգուի՝ իւր 54 տարեկան եղբորորդին — ԲէլՔուր, որ 1895է ի վեր գանձապետութեան պաշտօնը կը վարէր:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿՆԸ

ԱՇԽԱՏԱՅԻՐԱԿԱՆ — Հայաստանի աշխատհարկութիւնը. 233:

ԳՐԱԿԱՆ — Մ. Խորենացւոյ պատմութեան աղբերակ խնդիրը. 236:

ՀԱՆՆՈՍՈՒԿԱՆ — Գովապեան Նախապատմական գերեզմաններ. 240:

ՄԱՏՆԵՆԱՅԻՐԱԿԱՆ — Կորին վարդապետ եւ Նորին Թագմանութիւնը. 242:

ՊԼՏՄԱԿԱՆ — Շոխաքեթուաւոյ քաղաքն ու ազգայինը 1848 եւ 1849ին յեղափոխութեան արմեն. 246:

ԿԵՆՍՍԱԿԱՆ — Բժիշկ Գոկո. Նահապետ Ռուսիսնայ. 249:

ԱԶԳԱՅԻՐԱԿԱՆ — Հայ ժողովրդական դիցազնական վէպը. 252:

ԹՂԵԱՅՈՒԹԻՒՆ — Կեղծաւոր մատենախօսութիւն. 256: — Գրական ժամանց. 259: — Միլիթարեանց Զմիւռնիոյ վանատան դպրոցական քննութեան հանդէպ. 267:

ԼԵԶԻԿԱՆԱԿԱՆ — Արաբկիրի գաւառաբարձութ. 268:

ԲԱՆԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ 271:



ԿՐԵՏԱՐԱԿԻԶ ԵՒ ՊԵՏԱՍԽԱՆԱՅՈՒ ԽՄՈՒԿԻՐ

Կ. ՌԱՓԱՅԷԼ Կ. ՊԱՐՈՆԶ

ՎԻԵՆԱ, ԻՐԻՔԱՐԵԱՆ ԶԳԱՐԱՆ